ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25.12.2014թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ-ի՝ 2013-2014 ուստարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը: /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/
2. ԵՊՀ ԻՄ-ի՝ 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին: /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/
3. ԵՊՀ ԻՄ-ի՝ 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը (բյուջեն) հաստատելու մասին: /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/
4. ԵՊՀ հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության քննարկում: /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/
5. ԵՊՀ ԻՄ-ի ներքին աուդիտի անցկացման կարգի հաստատման մասին: /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/
6. ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին կանոնակարգը հաստատելու մասին: /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/
7. ԵՊՀ ԻՄ-ի մեթոդխորհրդի նոր կազմը հաստատելու մասին: /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/
8. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին -«ԵՊՀ ԻՄ-ի՝ 2013-2014 ուստարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը /Կցվում է/:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը, դեկանները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 7/1

- Հավանություն տալ 2013-2014 ուստարվա ընթացքում Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ տնօրենի հաշվետվությանը:
- Հավանություն տալ 2010-2014թթ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրով 2013-2014 ուստարում նախատեսված գործողությունների վերաբերյալ տնօրենի հաշվետվությանը:
- Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2013-2014 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի՝ 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը /Կցվում է/:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը, դեկանները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 7/2

- Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2014 թվականի (հունվար-նոյեմբեր) եկամուտների և ծախսերի վերաբերյալ գործունեության տնօրենի հաշվետվությանը /Կցվում է/:
- Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2014 թվականի եկամուտների և ծախսերի հաշվետվության գնահատումը կատարել հաշվեքննության արդյունքների հիման վրա և ներկայացնել Երևանի պետական համալսարան՝ հաստատման:

Լսեցին -« ԵՊՀ ԻՄ-ի՝ 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը (բյուջեն) հաստատելու մասին» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, նա կարևորելով ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը, մանրամասն ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի՝ 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը (բյուջեն) /Կցվում է/:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը, դեկանները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 7/3

- Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2015 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը համաձայն հավելվածի:
- Հանձնարարել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենին 2015 թվականի ծախսերը կատարել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2015 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:

Լսեցին -«ԵՊՀ հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության քննարկում» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Զեկուցողը նշեց, որ կառավարության որոշումով 2014թ նոյեմբերի 28-ից ԵՊՀ ՊՈԱԿ-ը դարձել է ԵՊՀ հիմնադրամ, որը ենթադրում ԵՊՀ-ի, ինչպես նաև մասնաճյուղի կանոնադրության փոփոխություն: Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը մանրամասն ներկայացրեց Երևանի պետական համալսարան հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության նախագիծը: /Կցվում է/

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, իրավախորհրդատու Ա. Հովհաննիսյանը, գիտքարտուղար Մ. Աթոյանը, դեկանները և այլոք: Արտահայտվողները հավանություն տվեցին կառավարության որոշմանը, որը նպատակ ունի առավել մեծացնելու մայր

բուհի, և բնականաբար նրա միակ մասնաճյուղի ֆինանսական և վարչական ինքնուրույնությունը, որոնք պետք է կյանքի կոչվեն անհրաժեշտ կանոնադրություններով:

Առողջ մթնոլորտում կայացավ կանոնակարգի բուռն քննարկում:

ՈՐՈՇԵՑԻՆ

Որոշում N 7/4

- Հավանություն տալ Երևանի պետական համալսարան հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության ներկայացված տարբերակին:
- Երևանի պետական համալսարան հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրությունը ներկայացնել Երևանի պետական համալսարան՝ հաստատման:

Լսեցին -«ԵՊՀ ԻՄ-ի ներքին աուդիտի անցկացման կարգի հաստատման մասին» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Զեկուցողը կարևորեց ԵՊՀ ԻՄ-ում ներքին աուդիտի անցկացման կանոնակարգված մոտեցումը, ներկայացրեց կարգի նախագիծը և առաջարկեց հաստատել առանց փոփոխությունների:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, իրավախորհրդատու Ա. Հովհաննիսյանը և այլոք: Արտահայտվողները նշեցին, որ նշված կարգի մշակման վրա հիմնականում աշխատել են ՄԿՈԱ բաժնի աշխատակիցները, հավանություն տվեցին կարգի նախագծին և առաջարկեցին հաստատել կարգը առանց փոփոխությունների:

ՈՐՈՇԵՑԻՆ

Որոշում N 7/5

- Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ներքին աուդիտի անցկացման կարգը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լսեցին -«ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին կանոնակարգը հաստատելու վերաբերյալ» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա կարևորեց ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցների խրախուսումը տարբեր միջոցներով, առաջարկեց մուհի աշխատակիցների աշխատանքը առավել արդյունավետ դարձնելու համար նրանց աշխատանքի գնահատումը իրականացնել հնարավորինս օբյեկտիվ, ունենալ համակարգված մոտեցում և առաջարկեց ընդունել ներկայացվող խրախուսման կարգը:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, իրավախորհրդատու Ա. Հովհաննիսյանը: Նրանք նույնպես կարևորեցին համակարգված մոտեցման անհրաժեշտությունը և առաջարկեցին ընդունել այն առանց փոփոխությունների:

ՈՐՈՇԵՑԻՆ

Որոշում N 7/6

- Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատակիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին կանոնակարգը:

- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լսեցին -« ԵՊՀ ԻՄ-ի մեթոդխորհրդի նոր կազմը հաստատելու մասին» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա ընդհանուր գծերով ներկայացրեց գործող մեթոդխորհրդի գործելաոճը, շնորհակալություն հայտնեց մեթոդխորհրդի անդամներին արդյունավետ աշխատանքի համար և առաջարկեց հաստատել մեթոդխոհրխրդի նոր կազմը:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, իրավախորհրդատու Ա. Հովհաննիսյանը, մեթոդխորհրդի անդամներ: Արտահայտվողներ հիմնականում գոհունակություն հայտնեցին մեթոդխորհրդի գործունեության վերաբերյալ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 7/7

- Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի մեթոդխորհրդի կազմը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ընթացիկ հարցեր

Լսեցին –

- Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի էթիկայի հանձնաժողովի կազմի փոփոխության մասին:

- Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը համակարգող հանձնաժողովի կազմի փոփոխության մասին:

Արտահայտվեցին – գիտական խորհրդի քարտուղար Մ.Աթոյանը, և հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, իրավախորհրդատու, ԱԿԲ բաժնի վարիչ Ա. Հովհաննիսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 7/8

- Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի էթիկայի հանձնաժողովի կազմը:/Կցվում է/
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում N 7/9

- Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կոռուպցիոն երևույթները համակարգող հանձնաժողովի կազմը:/Կցվում է/
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լսեցին - Շվեյցարիայի Ֆրայբուրգի համալսարանի դրամաշնորհային ծրագրով իրականացված <<Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ –ում>> հետազոտական

աշխատանքը հրատարակության երաշխավորման մասին /ծրագրի ղեկավար Հ. Մարզպանյան/ /Զեկ. Մ. Աթոյան/

Մ. Ս. Աթոյանը նշեց, որ <<Ընդհանուր տնտեսագիտության>> ամբիոնի նիստով որոշում է կայացվել դիմել ԵՊՀ Իմ գիտական խորհրդին՝ <<Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ –ում>> գիտահետազոտական աշխատանքը հրատարակության երաշխավորելու վերաբերյալ: Այդ հետազոտությունը իրականացվել է Շվեյցարիայի Ֆրայբուրգի համալսարանի դրամաշնորհային ծրագրով 2012 թ. հոկտեմբերից մինչև 2014 թ. նոյեմբերը: Ծրագրով նախատեսված աշխատանքները ավարտվել են, պատրաստվել է կոլեկտիվ հետազոտական աշխատանք, որը նախատեսված է հրատարակել հայերեն և անգլերեն լեզուներով: Աշխատանքին ծանոթացել և դրական կարծիք են տվել սոցիոլոգիայի դոկտոր պրոֆեսոր, Ա. Կ. Սահակյանը և տ.գ.դ. պրոֆեսոր, Զ. Թադևոսյանը:

Արտահայտվեցին - Հ. Մարզպանյանը, Ն. Խուդավերդյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 7/10

- Երաշխավորել հրատարակության <<Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ –ում>> գիտահետազոտական աշխատանքը:

Լսեցին - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնի դասախոս Միրա Կարապետյանի (համահեղինակ Զարուհի Առաքելյան) <<Ֆրանսերենի հնչյունաբանության ձեռնարկ, տեսական

դասընթաց>> ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորման մասին: /Զեկ. Մ. Աթոյան/

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի <<Օտար լեզուների>>՝ ամբիոնի նիստով որոշում է կայացվել դիմել ԵՊՀ Իմ գիտական խորհրդին՝ օտար լեզուների ամբիոնի դասախոս Միրա Կարապետյանի (համահեղինակ Զարուհի Առաքելյան) <<Ֆրանսերենի հնչյունաբանության ձեռնարկ, տեսական դասընթաց>> ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու վերաբերյալ: Այդ ձեռնարկը իր մեթոդական և առարկայական առումով մեծապես կօգնի <<Ֆրանսերեն լեզու և գրականություն>> մասնագիտությամբ սովորող ուսանողներին: Ձեռնարկը գրված է ֆրանսերեն լեզվով:

Արտահայտվեցին - Վ. Ալեքսանյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 7/11

- Երաշխավորել հրատարակության <<Ֆրանսերենի հնչյունաբանության ձեռնարկ, տեսական դասընթաց>> ուսումնամեթոդական ձեռնարկը:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար_____Մ.Ս. ԱԹՈՅԱՆ

25.12.2014թ.